«ԱՅ ԷՍ ՓԻ ՍԸՓՈՐԹ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, 0001,
փ. Թումանյան, շ. 13, բն. 40
Հեռ՝ +374-43971111
էլ. փոստ՝ info@ispsupport.am

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ISP-INT_____-____.____.202____
«ԻՆՏԵՐՆԵՏ» ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

Երևան **____.____.202____**

«ԱՅ ԷՍ ՓԻ ՍԸՓՈՐԹ» ՍՊԸ–ն, այսուհետ՝ **«ՄԱՏԱԿԱՐԱՐ»**, որը գործում է համաձայն թիվ **ԼԿ№1323** լիցենզիայի և ընկերության կանոնադրության, ի դեմս **Տնօրեն Վարդգես Համբարձումյանի** մի կողմից և **«_____»** _____**Ը–ն,** ի դեմս _____ մյուս կողմից, այսուհետ՝ **«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»**, որը գործում է համաձայն իր կանոնադրության, այսուհետ երկուսը միասին՝ **«ԿՈՂՄԵՐ»**, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 «ՄԱՏԱԿԱՐԱՐԸ» տրամադրում է «ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻՆ» «Ինտերնետ» ծառայություն, որը նախատեսում է Ինտերնետ ցանցի հասանելիությունը «ՄԱՏԱԿԱՐԱՐԻ» ՀՀ տարածքում առկա ենթակառուցվածի միջոցով (այսուհետև՝ «Ինտերնետ» ծառայություն) համաձայն Հավելված №1-ի:

2. ԳԻՆԸ և ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Սույն պայմանագրի 1.1 կետով «ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻՆ» տրամադրվող ծառայությունների արժեքը սահմանվում է սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված №1-ում:

2.2 Ծառայությունների դիմաց վճարումները կատարվում են հետվճարային սկզբունքով, հետևյալ կարգով՝

2.2.1 Մատուցված ծառայությունների վճարման համար հիմք է հանդիսանում «ՄԱՏԱԿԱՐԱՐԻ» կողմից տրված հարկային հաշիվը, որը «ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻՆ» է տրվում ամսական վարձերի համար՝ հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև 5-ը;

2.2.2 «ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ» ամսական ծառայությունների վարձերը վճարում է հարկային հաշիվը ստանալուց հետո, մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա վերջին օրը ներառյալ, իսկ միանվագ ծառայությունների վարձերը՝ մինչև Ծառայության ակտիվացումը:

2.3 Սույն պայմանագրի 2.2.1 և 2.2.2 կետերով սահմանված հաշիվները կազմվում են ՀՀ դրամով: Բոլոր վճարումները «ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ» կողմից կատարվում են ՀՀ դրամով:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

3.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ մտնում **____.____.202____ թ.–**ից և գործում է 1 (մեկ) ամիս ժամկետով:

3.2 Եթե սույն Պայմանագրի 3.1 կետում նշված պայմանագրի դադարեցման ժամկետը լրանալուց առնվազն 5 (նիհնգ) օր առաջ Կողմերից որևէ մեկը մյուս կողմին չի հայտնում սահմանված ժամկետում պայմանգրի դադարեցման իր մտադրության մասին, ապա սույն Պայմանագիրը ինքնաբերաբար երկարում է 1 **(**մեկ**)** ամսով: Սույն դրույթը համապատասխանաբար տարածվում է հերթական դադարեցման ժամկետների վրա:

4. ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

«ՄԱՏԱԿԱՐԱՐԸ» իրավունք ունի՝

4.1 Անմիջապես դադարեցնել սույն պայմանագրով նախատեսվող ծառայությունների մատուցումը, եթե «ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ» խախտել է սույն պայմանագրի 2.2.2 և/կամ 5.1-5.6 կետերի պահանջները:

4.2 Անհրաժեշտ տեխնիկական աշխատանքները կատարելու նպատակով դադարեցնել ծառայությունների մատուցումը, նախօրոք՝ առնվազն 2 (երկու) աշխատանքային օր առաջ տեղեկացնելով «ՊԱՏՎԻՐԱՏՈՒՀԻՆ» այդ աշխատանքների սկզբի և ավարտի ժամկետների վերաբերյալ: Բոլոր դեպքերում անհրաժեշտ տեխնիկական աշխատանքների հետ կապված անջատումների ու ինտերնետ կապի ընդհատումների տևողությունը չպետք է գերազանցի ամսական 8 ժամը: Եթե դրանց տևողությունը կգերազանցի ամսական 8 ժամը, ապա չաշխատած ժամանակահատվածի համար համամասնորեն կպակասեցվի ծառայությունների ամսական արժեքը:

4.3 «ՄԱՏԱԿԱՐԱՐԻ» կողմից վերահսկվող տեղամասերում տեղի ունեցած վթարների հետևանքով Ինտերնետ կապի ընդհատման դեպքում «ՄԱՏԱԿԱՐԱՐԸ» վերացնում է դրանք սույն պայմանագրի 6.2 կետով սահմանված կարգով:

4.4 «ՄԱՏԱԿԱՐԱՐԻ» կողմից նշանակված անձնակազմը իրավունք ունի այցելել և ազատ մուտք ստանալ «ՊԱՏՎԻՐԱՏՈՒՀԻ» տարածք՝ Ինտերնետ ծառայությունների պատշաճ օգտագործման և որակի մեջ համոզվելու համար և իր տեխնիկական անձնակազմի միջոցով վերացնել առաջացած որևէ տեխնիկական անսարքությունը:

4.5 Անմիջապես դադարեցնել սույն պայմանագրի գործողությունը եթե «ՄԱՏԱԿԱՐԱՐԻ» և/կամ իր «ՊԱՏՎԻՐԱՏՈՒՀԻ» սարքավորումները և ծրագրային միջոցները վնասվել են կամ ծածկագրերի բացահայտման փորձեր են տեղի ունեցել

4.6 Ցանկացած ժամանակ վաղաժամկետ դադարեցնել սույն Պայմանագիրը՝ 10 **(**տասը**)** օր առաջ նախապես տեղյակ պահելով «ՊԱՏՎԻՐԱՏՈՒՀԻՆ» դադարեցման ժամկետի մասին:

5. ՊԱՏՎԻՐԱՏՈՒՀԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ» պարտավոր է՝

5.1 Համաձայն սույն պայմանագրի 2-րդ հոդվածի և սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված №1-ով սահմանված կարգով և չափով վճարումները կատարել լրիվ ծավալով և ժամանակին:

5.2 Տեղեկացնել «ՄԱՏԱԿԱՐԱՐԻՆ» սույն Պայմանագրի գործողության ընթացքում վերջնակետային սարքավորումների փոփոխության վերաբերյալ և դրանք օգտագործել միայն «ՄԱՏԱԿԱՐԱՐԻ» համաձայնությամբ:

5.3 Զերծ մնալ Ինտերնետ ցանցի ցանկացած օգտագործումից, որը կարող է վնաս հասցնել այլ ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց իրավունքներին, և որը կարող է հանգեցնել որևէ ֆիզիկական և/կամ իրավաբանական անձի մտավոր սեփականության իրավունքների խախտմանը:

5.4 Պատշաճ օգտագործել և շահագործել իր հսկողության տակ գտնվող ցանցը և հատուցել «ՄԱՏԱԿԱՐԱՐԻՆ» և վերջինիս բաժանորդներին ցանցի սխալ օգտագործման հետևանքով կրած վնասները:

5.5 Օգտագործել սույն Պայմանագրով մատուցվող ծառայությունը ՀՀ օրենսդրությամբ և ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերով չարգելված նպատակներով:

5.6 Ցուցաբերել անհրաժեշտ աջակցություն «ՄԱՏԱԿԱՐԱՐԻ» կողմից մշակված անվտանգության և պաշտպանության միջոցառումները իրականացնելու համար:

5.7 «ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ» երաշխավորում է, որ «Ինտերնետ» ծառայության իր կողմից օգտագործումը չի խախտի ՀՀ օրենսդրությունը, իրեն տրամադրված լիցենզիայի պայմանները՝ եթե գործունեությունը լիցենզավորված է:

6. ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ՄԱՏԱԿԱՐԱՐԸ» պարտավոր է՝

6.1 «ՊԱՏՎԻՐԱՏՈՒՀԻՆ» ժամանակին ներկայացնել ճշգրիտ և մանրամասն հաշիվ՝ մատուցված ծառայությունների դիմաց:

6.2 «ՄԱՏԱԿԱՐԱՐԻ» մեղքով Ինտերնետ կապի ընդհատման կամ որակի անկման մասին Հավելված №2-ում սահմանված կարգով ահազանգ ստանալու դեպքում վերացնել դրանք իր վե-

ռահսկողության տակ գտնվող տարածքներում ողջամիտ ժամկետում, որը սակայն չպետք է գերազանցի 3 (երեք) օր:

6.3 Ապահովել «ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ» կողմից նշանակված անձնակազմի մուտքը «ՄԱՏԱԿԱՐԱՐԻ» կողմից տնօրինվող տարածքի այն մասը, որտեղ տեղակայված է «ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻՆ» պատկանող փոխկապակցման սարքավորումը՝ «ՄԱՏԱԿԱՐԱՐԻ» կողմից սահմանված անվտանգության կանոնների պահպանմամբ:

6.4 Սույն պայմանգրում նշված պայմաններն ու սակագները փոփոխելիս նախապես՝ առնվազն 2 (երկու) օր առաջ տեղյակ պահել «ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻՆ» գրավոր կամ էլեկտրոնային նամակի միջոցով:

7. ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ» իրավունք ունի է՝

7.1 Սույն Պայմանագրի 4.3 և 8.2 կետերում նախատեսված դեպքերի հետևանքով «Ինտերնետ» ծառայության մատուցման ընդհատումների ժամանակահատվածի համար պահանջել «ՄԱՏԱԿԱՐԱՐԻՑ» համամասնորեն պակասեցնելու ծառայության ամսական վարձը՝ եթե նշված դեպքերի հետևանքով տեղի ունեցած անջատումների ու ինտերնետ կապի ընդհատումների տևողությունը կգերազանցի ամսական 24 (քսանչորս) ժամը:

7.2 Մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը ցանկացած ժամանակ միակողմանի լուծել սույն Պայմանագիրը՝ 30 աշխատանքային օր առաջ տեղեկացնելով «ՄԱՏԱԿԱՐԱՐԻՆ» և վճարելով փաստացի ստացված ծառայությունների համար:

7.3 Փոխել սակագնային պլանը՝ 15 (տասնհինգ) օր առաջ համապատասխան գրավոր հայտ ներկայացնելով «ՄԱՏԱԿԱՐԱՐԻՆ»: Ընտրված սակագնային պլանին «ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ» փոխադրումը կիրականացվի «ՄԱՏԱԿԱՐԱՐԻ» մոտ համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում և համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով:

7.4 Ցանկացած ժամանակ վաղաժամկետ հրաժարվել սույն Պայմանագիրը կատարելուց՝ 10 **(**տասը**)** օր առաջ նախապես տեղյակ պահելով «ՄԱՏԱԿԱՐԱՐԻՆ» դադարեցման մասին: Պայմանագիրը դադարում է իր գործողությունը «ՄԱՏԱԿԱՐԱՐԻ» կողմից ծանուցումը ստանալու պահից:

8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1 Սույն պայմանագրի ելակետն այն է, որ «ՄԱՏԱԿԱՐԱՐԸ» չի վերահսկում Ինտերնետը, այդ իսկ պատճառով վերջինս չի կարող տալ ոչ մի երաշխիք իր կողմից «ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻՆ» մատուցվող ծառայությունների համար: Այդ ծառայությունները հիմնված են «ինչպես որ կա» սկզբունքի վրա և «ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ» սույնով ընդունում է «ՄԱՏԱԿԱՐԱՐԻ» հեռահաղորդակցության համակարգի օբյեկտիվ տեխնիկական սահմանափակումները:

8.2 «ՄԱՏԱԿԱՐԱՐԸ» պատասխանատվություն չի կրում իր հսկողությունից դուրս գտնվող տարածքներում Ինտերնետի որևէ ընդհատումների և/կամ վերականգնման ուշացումների համար: Այնուամենայնիվ, նման ընդհատումների և/կամ վերականգնման ուշացումների դեպքում, որոնք կգերազանցեն ամսական 24 ժամ, չաշխատած ժամանակահատվածի համար համամասնորեն կպակասեցվի ծառայությունների ամսական արժեքը:

8.3 Խափանումների, ընդատումների և պարապուրտների դեպքում կազմվում է համապատասխան ծանուցում/դիմում/բողոք, որը բերված է Հավելված 2–ում:

8.4 «ՄԱՏԱԿԱՐԱՐԸ» չի վերահսկում և որևէ պատասխանատվություն չի կրում սույն Պայմանագրով մատուցվող ծառայություններից օգտվելու հետևանքով «ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ» կողմից Ինտերնետ ցանցով հաղորդվող տվյալների բովանդակության համար: «ՄԱՏԱԿԱՐԱՐԻ» ցանցով ստացված ցանկացած տեղեկություն «ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ» կողմից օգտագործվում է իր ռիսկով և պատասխանատվությամբ: «ՄԱՏԱԿԱՐԱՐԸ» որևէ պատասխանատվություն չի կրում իր ցանցի միջոցով ձեռքբերված տեղեկատվության ճշտության, օրինականության կամ որակի համար:

8.5 Կողմերը կրում են պատասխանատվություն միայն մյուս Կողմին սույն պայմանագրի գործողության ընթացքում հասցված ուղղակի և ապացուցված վնասների համար (իրական վնաս): Անուղղակի վնասները և բաց թողնված օգուտը հատուցման ենթակա չեն:

8.6 Սույն Պայմանագրով մատուցվող ծառայությունների պայմանների հետ կապված ցանկացած տեղեկատվություն «ՊԱՏՎԻՐԱՏՈՒ» կարող են ստանալ «ՄԱՏԱԿԱՐԱՐԻ» համապատասխան պատասխանատու աշխատիկցներից հետևյալ հեռախոսահամարներով և/կամ էլեկտրոնային հասցեով՝

Հեռ.՝ +37443-971111

Էլ. փոստ՝ info@ispsupport.am

8.7 Յուրաքանչյուր Կողմ (եթե կիրառելի է) մշակում է մյուս Կողմի աշխատակիցների անձնական տվյալները ծրագրային-ապարատային միջոցների օգտագործմամբ կամ առանց դրանց օգտագործման: Անձնական տվյալների մշակում ցանկացած գործողություն անհատական տվյալների հետ, ներառյալ մշակումը, օգտագործումը, ինչպես նաև երրորդ անձնաց (ներառյալ՝ այլ երկրներ) փոխանցումը:

Յուրաքանչյուր Կողմ երաշխավորում է իր աշխատողների համաձայնությունը իրենց անձնական տվյալների մշակմանը:

Յուրաքանչյուր Կողմ պարտավոր է անձնական տվյալների մշակման բոլոր փուլերում ապահովել անձնական տվյլաների գաղտնիությունն ու պաշտպանությունը ՀՀ օրենսդրության համաձայն:

Սույն պայմանագիրը կնքելով «ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ» հավաստում է, որ «ՄԱՏԱԿԱՐԱՐԻ» կողմից ծանուցված է «ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ» աշխատակիցների անձնական տվյալները մշակելու «ՄԱՏԱԿԱՐԱՐԻ» մտադրության, մշակման իրավական հիմքերի, նպատակի ինչպես նաև «Անձնական տվյալների մասին» ՀՀ օրենքով նախատեսված ծանուցմանը վերաբերող այլ տեղեկությունների մասին:

8.8 Սույն Պայմանագիրը կնքելով «ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ» տեղեկացվում է, որ «ՄԱՏԱԿԱՐԱՐԸ» կարող է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով վարկային բյուրոներին տրամադրել «-ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻՆ» վերաբերող սույն պայամանգրից բխող վարկային տեղեկատվությունը:

9. ՖՈՐՍ ՄԱԺՈՐ

9.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, հրդեհը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով Կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի դադարեցնել պայմանագիրը՝ այդ մասին նախապես գրավոր տեղյակ պահելով մյուս Կողմին:

10. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

10.1 Պայմանագրում լրացումներ, փոփոխություններ՝ կապված նոր ծառայությունների մատուցման կամ պայմանագրի պայմանների փոփոխման հետ, կարող են կատարվել միայն երկկողմանի գրավոր համաձայնությամբ, որոնք կհանդիսանան սույն պայմանագրի անբաժանելի մաս:

11. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

11.1 Սույն Պայամանագրի հետ կապված Կողմերից յուրաքանչյուրի հայտարարությունները պետք է կատարվեն գրավոր և ուղարկվեն Կողմերի սույն պայմանագրում նշված հասցեներով:

12. ՎԵՃԵՐ

12.1 Սույն պայմանագրի Կողմերի միջև որևէ վեճի դեպքում այն ենթակա է լուծման բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չհասնելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով: «ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ» կողմից սույն պայմանագրից առաջացած դրամային պարտավորությունները սահմանված կարգով և ժամկետներում չկատարելու դեպքում «ՄԱՏԱԿԱՐԱՐԸ» իրավունք ունի «ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ» պարտքերը բռնագանձելու ուղղությամբ ձեռնարկել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված միջոցները, ներառյալ դիմել դատարան՝ գումարի բռնագանձման պահանջով: «ՄԱՏԱԿԱՐԱՐԸ» իրավունք ունի սույն կետում նշված պահանջի իրավունքը զիջել կամ իրավունքբ իրագործումը հանձնարարել երրորդ անձանց: Ընդ որում, սույն Պայմանագիրը կնքելով, «ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ» ընդունում և համաձայնվում է, որ պահանջի իրավունքը զիջելու կամ իրավունքի իրագործումը երրորդ անձանց հանձնարարելու դեպքում «ՄԱՏԱԿԱՐԱՐԸ» կփոխանցի պահանջի իրավունքը հաստատող փաստաթղթերը և կհաղորդի պահանջի իրականացման համար նշանակություն ունեցող «ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻՆ» վերաբերող այլ ցանկացած տեղեկությունները (ներառյալ անձնական տվյալներ) երրորդ անձանց, ի օգուտ որոնց զիջվել է պահանջի իրավունքը և/կամ հանձնարարվել է իրավունքի իրագործումը:

13. ԼԵԶՈՒ

13.1 Սույն պայմանագիրը կազմված է 2 օրինակից՝ հայերեն և ռուսերեն լեզուներով, յուրաքանչյուր Կողմը ստանում է մեկական օրինակ, հակասությունների դեպքում գերակայում է հայերեն տարբերակը:

«ՄԱՏԱԿԱՐԱՐ»	«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»
«ԱՅ ԷՍ ՓԻ ՍԸՓՈՐԹ» ՍՊԸ ՀՀ, ք. Երևան, 0001, Կենտրոն, Աբովյան փող, շենք 13, բնակարան 40 «Կոնվերսբանկ» ՓԲԸ Հ/Հ 19300445443800 ՀՎՀՀ 02825529 Տնօրեն	«_____»_____Ը ՀՀ, _____ _____ «_____» _____Ը Հ/Հ _____ ՀՎՀՀ _____ Տնօրեն
Կ.Տ. **Վ.Համբարձումյան**	**Կ.Տ.** _____

ՀԱՎԵԼՎԱԾ 1

1. ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 «ՄԱՏԱԿԱՐԱՐԸ» ապահովում է «ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻՆ» անսահմանափակ սիմետրիկ Ինտերնետ հոսք հետևյալ հասցեներում երաշխավորված, առավելագույն արագությամբ՝ «Օպերատորի» ՀՀ տարածքում առկա կամ արկալված ենթակառուցվածքի միջոցով՝

№	Հասցե	INTERNET, Մբիթ/վրկ
1	ՀՀ, _____	_____

1.2 Ինտերնետ հոսքի արագությունը կարող է տատանվել կախված ցանցի ծանրաբեռնվածությունից և ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ միացման տեխնիկական պայմաններից:
«ՄԱՏԱԿԱՐԱՐԻ» ցանցին միացումը իրականացվում է ՕՄՄ մոդեմի միջոցով:
«ՄԱՏԱԿԱՐԱՐԻ» ցանցին «ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ» սարքավորումների սիմետրիկ միացման ընդհանուր արագությունը կազմում է _____ Մբիթ/վրկ:
«Ինտերնետ» ծառայության մեջ նաև մտնում է «ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ» երթուղավորչից մինչև «ՄԱՏԱԿԱՐԱՐԻ» սարքավորումները միացնող կապուղին:

2. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐ

2.1 Սույն հավելվածի 1.1 կետում նկարագրած Ինտերնետ ծառայության միացման վարձավճար է սահմանվում 0 ՀՀ դրամ:
2.2 Սույն հավելվածի 1.1 կետով տրամադրված Ինտերնետի ծառայության ամսական վարձավճար է սահմանվում _____ **(**_____**)** ՀՀ դրամ, ներառյալ հարկերը:
2.3 IP/26 դիմակով հասցեների տրամադրման ամսական բաժանորդային վարձ է սահմանվում 0 ՀՀ դրամ:

3. ՀԱՎԵԼՎԱԾԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

3.1.Սույն հավելվածը ուժի մեջ է մտնում ____.____.202____ **թ:**

«ՄԱՏԱԿԱՐԱՐ»	«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»
«ԱՅ ԷՍ ՓԻ ՍԸՓՈՐԹ» ՍՊԸ ՀՀ, ք. Երևան, 0001, Կենտրոն, Աբովյան փող, շենք 13, բնակարան 40 «Կոնվերսբանկ» ՓԲԸ Հ/Հ 19300445443800 ՀՎՀՀ 02825529 Տնօրեն **Կ.Տ.** **Վ.Համբարձումյան**	«_____» _____Ը ՀՀ, _____ _____ «_____» _____Ը Հ/Հ _____ ՀՎՀՀ _____ Տնօրեն **Կ.Տ.** _____

ՀԱՎԵԼՎԱԾ 2

1. ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱՓԱՆՄԱՆ ԿԱՄ ԱՆՍԱՐՔՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ / ԴԻՄՈՒՄ / ԲՈՂՈՔ

№	Ծառայության խափանման կամ անսարքության մասին ծանուցում / դիմում / բողոք ներկայացրած բաժանորդի անունը, ազգանունը, ծանուցման / բողոքի ներկայացման ամսաթիվը	Անսարքության / խափանման տեսակը	Խնդրի վերացման ժամանակահատված				Տևողություն	Փոխհատուցում տրամադրելու (եթե կիրառվել է) կամ վճար չգանձելու մասին տեղեկությունը
			Սկիզբ		Ավարտ			
			Ամսաթիվ	Ժամ	Ամսաթիվ	Ժամ		
1.								

«ՄԱՏԱԿԱՐԱՐ»	«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»
«ԱՅ ԷՍ ՓԻ ՍԸՓՈՐԹ» ՍՊԸ	«_____» _____Ը
ՀՀ, ք. Երևան, 0001, Կենտրոն,	ՀՀ, _____
Աբովյան փող, շենք 13,	_____
բնակարան 40	
«Կոնվերսբանկ» ՓԲԸ	«_____» _____Ը
Հ/Հ 19300445443800	Հ/Հ _____
ՀՎՀՀ 02825529	ՀՎՀՀ _____
Տնօրեն	Տնօրեն
Կ.Տ.	**Կ.Տ.**
Վ.Համբարձումյան	_____